№ 60 ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 28 **1894** ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 28 № 60

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՆՆԱ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ ԼՕՐԻՍ-ՄԷԼԻՔԵԱՆ *իր որդու՝ բժ.* ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՔԱՐԵԱՆ ԼՕՐԻՍ-ՄԷԼԻՔԵԱՆԻ *և աղջիկների հետ ցաւօք սրտի յայտնում է ազգականներին, ծանօթներին և հանգուցեալի պաշտօնակիցներին իր ամուսնու՝ պաշտօնաթող դնդապետ*

ԶԱՔԱՐԻԱ ԴԱՆԻԷԼԵԱՆ ԼՕՐԻՍ-ՄԷԼԻՔԵԱՆԻ

մահվան մասին, խոնարհաբար խնդրելով շնորհ բերել յուղարկաւորութեան հանդիսին սեփական տնից, Սադովայա № 25, Մողնու եկեղեցին, կիրակի, առաւօտեան 9 ժամին։ Ամբիծքը տեղի կունենայ շաբաթ, 7 ժամին երեկոյեան։

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրօնափոխութիւնը Թիւրքայ հայերի մէջ.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Նամակ Էջմիածնից. Նամակ Խարբերդից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—* ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Բոլգարական անցքերը. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—* ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. *—* ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. *—* ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. *—* ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. *Քահանայական հարցը և Ներսէս Աշտարակեցի.*

ԿՐՕՆԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԱՅ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

—

Վերջին քսան, քսան հինգ տարվայ ընթացքում, հարիւրաւոր փաստերով և մանրամասն ուսումնասիրութեամբ հաստատապէս ապացուցվեց, որ հայերի մէջ կրօնափոխութեան պատճառները երկու են. նախ՝ մեր հոգևորականութեան ագիտութիւնը, որ իր անտանելի վարմունքով և յարաբերութիւններով յետ է մղում ժողովրդին թէ իրանից և թէ լուսաւորչական եկեղեցուց, և երկրորդ՝ անտեսական ու նիւթական ծանր պայմանները, որոնք ստիպում են անտէր զիւղացուն, անօգնական արհեստաւորին ընկնել մի օտար քարոզչի, մի եկեղոր միսիոնէրի գիրկը, ընդունել նրա կրօնը, յոյս ունենալով նրանից կամ նրա միջոցով հովանաւորութիւն գտնել և պաշտպանվել։

Եթէ եղել են կրօնափոխութեան ուրիշ պատճառներ, ուրիշ դրդիչ շարժառիթներ,—դրանք միայն բացառիկ, պատահական ընդարձակութիւն են կրում. այնպէս որ, եթէ խորը նայենք, անպայման կը համոզվենք, որ կրօնափոխութեան գլխաւոր շարժառիթը, օրինակ, Թիւրքայ Հայաստանում, վերևում յիշատակած երկու գլխաւոր հանգամանքներն են։

Դեռ նորերս, ինչպէս գիտեն ընթերցողները, Աղաշկերտի կողմերից աւելի քան 100 ընտանիք դիմեցին Կ. Պոլսի յունաց պատրիարքարանին, յայտնելով որ պատրաստ են ընդունել յունադաւանութիւն, միայն թէ յունաց պատրիարքարանը պաշտպանէ իրանց զանազան ճնշումներից և նեղութիւններից։ Եւ դա եզակի փաստ չէ, այլ մի իրողութիւն, որ վերջին տարիների ընթացքում անդադար կրկնվել է և կրկնվում է։ Սովից, զանազան հալածանքներից, գժբաղդ պատահարներից նեղված ժողովուրդը, ուրիշ ելք չը գտնելով, ուրիշ ապաստան չունենալով, դիմում է կրօնափոխութեան, երևակայելով որ ընդունելով կաթոլիկութիւն կամ բողոքականութիւն, նա կապահովի իրան մաշող, իր ընտանեկան և անհատական կեանքը դառնացնող անտանելի պայմաններից։

Միւս կողմից այդ տրամադրութեանը աւելի ոյժ է տալիս հայոց ազգ. հոգևորականութիւնը, որը փոխանակ հանդիսանալու իբրև սփոփիչ բարեկամ և խորհրդատու ժողովրդին՝ նրա կեանքի ծանր ըսպէնեռում, նրա յուսահատութեան ժամանակ, ընդհակառակը, իր անտարբերութեամբ, իր անշնորհութեամբ, նոյն իսկ իր անտանելի յարաբերութիւններով, և վերջապէս իր զանազան խստութիւններով, օրինակ ամուսնական հարցերում, աւելի է սաստկացնում կրօնափոխութեան հոսանքը, և աւելի սիրտ տալիս զանազան միսիոնէրներին գործունէութեան։

Եւ այդ միսիոնէրները, որոնք ընդհանրապէս ասելով, թէ իրանց մտաւոր պաշարով, թէ իրանց եռանդով, և թէ վերջապէս իրանց անձնուիրութեամբ անհամեմատ բարձր են քան հայոց հոգևորականութիւնը, իր գործունէութեան աջողութիւնը հիմնում է մի կողմից լուսաւորչական հոգևորականութեան ագիտութեան, միւս կողմից ժողովրդի առօրեայ կեանքի ծանր պայմանների վրա։

Եւ ահա այսօր, մենք ականատես ենք լինում թէ ինչպէս կրօնափոխութիւնը Թիւրքայ-Հայաստանում փոխանակ նուազելու, փոխանակ սահմանափակվելու, օրից օր աւելի է աճում, աւելի է զարգանում, այնպէս որ կաթոլիկ և բողոքական համայնքը այնտեղ այսօր կազմում է մի պատկառելի թիւ, մի նշանաւոր մեծութիւն։

Ինչով, ինչպէս և ինչ ուժերով է ուզում լուսաւորչական հոգևորականութիւնը մրցել այդ երևոյթի դէմ,—կրօնափոխութեան հոսանքի դէմ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻՑ

—

Մայիսի 15-ին

Լուրեր են պատում, որ Էջմիածնում լուրջ ուշադրութիւն են ուզում դարձնել վանքապատկան ընդարձակ հողերի մշակութեան և արդիւնքի անտեսութեան վրա։ Վանքի նախկին գիւնեդործի հետ պայմանը վերանորոգված է. նորերս հրաւիրված է մի երիտասարդ շերամագործ և անտառապահ, և վերջապէս դիտաւորութիւն կայ «պլանի» ամբողջ անտեսութեան և կառավարութեան համար հրաւիրել մի մասնագէտ գիւղատնտես։ Այս բոլորը, եթէ միայն յարատև լինի, շատ ուրախալի է և ցանկալի, որովհետև օրինաւոր գիւղատնտեսութեամբ միայն կարելի է վանքի եկամուտները մեծացնել և ազգինքը ազատ պահել յափշտակող ձեռքերից։ Էջմիածինն ունի այսօր ընդարձակ հողեր, շահաւէտ կալուածքներ և որ ամենագլխաւորն է՝ հիմնաւոր գործ սկսելու հարկաւոր դրամագլուխ. ինչ կասկած, որ եթէ վանական կառավարութեան գլուխ կանգնած լինեն եռանդուն, ազնիւ և հակացող մարդիկ, վանքապատկան կալուածքները մեծամեծ օգուտներ կը տան, այն ինչ մինչև այժմ «պլանի» ընդարձակ անտեսութիւնը հազիւ կարողացել է ծածկել միարանութեան ամենաառնմանավակ կարիքները։

Սակայն որքան և գեղեցիկ լինեն այդ բոլոր դիտաւորութիւնները և կատարվելիք անտեսագիտական փոփոխութիւնները, այնու ամենայնիւ դժուար թէ ամենագիտուն գիւղատնտեսն անդամ կարողանայ իր ցանկացած և ծրագրած օգուտները տալ Էջմիածնին, քանի որ ջրային խնդիրը կը մնայ նոյն դրութեան մէջ, ինչ որ ներկայումս է։ Վանքապատկան բերրի հողերի ընդարձակ տարածութիւնների մեծագոյն մասը ընկած է առանց մշակութեան, իսկ որպէս արօտատեղի՝ նա շատ աղքատ և անպարմար է։ Ջուրը, բուսականութեան այդ ոգին, պակասում է մշակութեան պիտանի հողերին, որոնք ծառայում էին մեծ մասամբ որպէս արօտատեղեր՝ մի քանի հարիւր վտիտ, հիւանդոտ վանքապատկան անասուններին։ Շնորհիւ ջրի պակասութեան, Էջմիածինը ստիպված է բուսական դրեթէ ամբողջ մշակութիւնը սահմանափակել ցորեն ցանելով, որը, ի դէպ ասել, աննշան բերք է տալիս, այն ինչ, եթէ այդ հողերը ունենային ջրի հարկաւոր քանակութիւն, կարող կը լինէին գիւղատնտեսական աւելի թանգագին և արդիւնաւէտ բոյսեր արդիւնաբերել, որպէս բամբակ, բրինձ, քնջիթ, ծխախոտ և այլն։

Պարզ է, որ ջուր բերելու հարցը Էջմիածնի կառավարութեան համար ամենառաջին կարևորութիւն ունեցող խնդիրներից մէկը պէտք է լինի։ Վեհափառ Կաթողիկոսը, ինչպէս հաստատ աղբիւրից լսել ենք, զբաղված է այդ կարևոր հարցով։ Ինչպէս ասում են, մասնագէտը հնարաւոր է համարել հարկաւոր ջուր բերելը, եթէ Էջմիածինը միջոց ունենայ անհրաժեշտ ծախսերն անելու։ Բացուեցի մի քանի հարուստներ խոստացել են հարկաւոր դրամագլուխը տալ. բայց թէ Ք՞ը կիրականանայ մեր հարուստների այդ խոստումները։ Բայց թէ այդ ընծայարան կոչվածը ինչ պատկեր էր ներկայացնում, մենք կը բերենք մի դէպք, որ հաղորդված է պաշտօնապէս «Արարատի» միջոցով։ Այդ ընծայարանում թխված մի տիրացու Երևանի կոնսիստորիան ենթարկում է քննութեան. և ահա արձանագրութեան մէջ ինչ է ասված տիրացուի գիտութեան մասին. «ի զրաղիտութեան միջակ, բայց քահանայական գիտելեաց մէջ հմուտ»։ Դուրս է գալիս, որ տիրացուն կարող է անդրադէտ լինել, բայց քահանայական գիտելեաց մէջ հմուտ։ Եւ այդպիսի տիրացուին Երևանի կոնսիստորիան առաջարկում է ձեռնադրել. տարակոյս չը կայ, որ Սինոդը մերժում է։

Եթէ Սինոդի կարդադրութիւնը մինչև այժմ իր ոյժի մէջ մնար, այդ կը լինէր և քահանայական խնդրի ամենարնական, ամենալաւ լուծումը։ Բայց նա չը մնաց և ահա նորից կնճռվեց խնդիրը և ստացաւ եկեղեցու ու ժողովրդի համար ամենավտանգաւոր ուղղութիւն, որ ձգտում է վերահաստատել մի մեռասակար կարգ։ Ինչով էին արդարացնում նախկին կարգի զեկավարները տգէտ քահանաների ձեռնադրութիւնը. ինչով էր սիմոնականութիւնը վարագուրվում։ Ահա այն սոփեստական պատճառաբանութիւնները, որոնք տկարամիտներին համոզեցուցիչ էին թվում. «Քանի որ կրթվածը, ուսում առածը չէ ցանկանում քահանայ լինել, իսկ ժողովուրդը առանց քահանայի թողնել անկարելի է, որովհետև մեռածին պէտք է թաղել, ծնվածին մկրտել, ամուսնացողներին պսակել, ուստի կամայ ակամայ ստիպված ենք կիսակիրթներին և տգէտներին ձեռնադրել»։ Կամ «աւելի լաւ է տգէտ քահանայ ունենալ, քան բոլորովին չունենալ, այլ խօսքերով, երկու չարիքից փոքրագոյնը ընտրել»։ Այս պատճառաբանութիւնները արժանի էին ուսումնասիրութեան. պէտք էր իմանալ, ճշմարիտ է, որ ժողովուրդը մնում է առանց քահանայի։ Թողնել ժողովուրդը առանց օրինակատարութեան, ժամասացութեան, այդ անկարելի է. պէտք էր ամենայն լրջութեամբ վերաբերվել այդ խնդրին, և տեղապահութեան ժամանակ այդպէս էլ արվեց, նախ քան տգէտ քահանաների ձեռնադրութիւնն արգելելը։ Սեղրակեան սրբազան կաղմեց Ռուսաստանի հայոց քահանաների վիճակագրութիւնը և դուրս եկաւ, որ եղածները շատ և շատ բաւական են հովուելու ժողովուրդը, և ամենեին կարիք չը կայ նոր քահանաներ ձեռնադրել մի երկար ժամանակի համար։

Ուրեմն սիմոնականների գլխաւոր առարկութիւնը բոլորովին անհիմն է։ Դժբախտաբար, այդ առարկութիւնը ունեցել է իր ազդեցութիւնը և Արշէն երէցի վրա։ Իր քարոզով, դուցէ նոյն իսկ հակառակ իր սպասածին, Արշէն երէցը աւելի ոյժ տուեց այդ առարկութեան կողմնակիցներին։

Արշէն երէցի քարոզը երկու տեսակ տպաւորութիւն է առաջ բերել։ Մի կողմից նա արձանագրում է Վեհափառ Խրիմեանի այն խօսքերը, թէ ժողովուրդը պէտք է ունենայ ուսեալ, կրթեալ քահանաներ, որ ուսեալ քահանան ժողովրդի ազն է և եթէ հովիւն ևս կոյր լինի, ինչպէս նա կարող է առաջնորդել ժողովրդին, երկուսն էլ խորխորատի մէջ կընկնեն. իսկ միւս կողմից նա գիւղացիների փաստաբանութիւնը Հայրիկի այդ յորդորի դէմ «արդար» է անուանում։ Քարոզի ընդհանուր տպաւորութիւնը հետևեալն է. «քանի որ չը կան ուսեալ, կրթեալ քահանաներ, պէտք է բաւականանալ նրանցով, որոնց առաջարկում է ժողովուրդը հանրագրութիւններով» և այդ հանրագրութիւններին յոդուածագիրը մեծ նշանակութիւն է տալիս։ Ուրեմն Արշէն երէցը կրկնում է միայն նախկին առարկութիւնները։ Այդ մտքով հականալով քարոզը, Սեղրակեան սրբազան բարոյական պարտք համարեց մտքառել նրա դէմ, տեսնելով որ այդ մտքի քարոզութիւնը կարող է նոր ոյժ և թև տալ տգէտ քահանաների ձեռնադրութեան ջատագովներին։ Հակառակորդները փոխանակ փաստերով ջրելու Սեղրակեան եպիսկոսի ասածը, հայհոյանք ուղղեցին նրա դէմ, ամբաստանելով, որ նա աղաւաղել է Արշէն երէցի միտքը։

Ամենալաւ ապացոյցը, որ Սեղրակեան սրբազան չէ սխալվում, դա այն գործնական հետևանքն է, որ ունեցել է այդ քարոզը։ «Մշակի» մէջ տպված բազմաթիւ թղթակցութիւններից և լուրերից ընթերցողները գիտեն, որ ներկայումս դաւառներից և զանազան խուլ անկիւններից տգէտ տիրացուների մի մեծ հոսանք է սկսվել դէպի առաջնորդանիստ քաղաքները և շատ տեղերում արդէն ձեռնադրվում են այնպիսի տիրացուներ, որոնց մի երկու տարի առաջ սինոդը մերժել է անդրագիտութեան և տգիտութեան պատճառով։ Բացի դրանից Երևան են եկել մի նոր տիպի հաստատութիւններ, որոնց անուանում են դպրոց ուսումնարան, ընծայարան, կամ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

—

Քահանայական խնդիրը նոր չէ. դեռ այս դարի սկզբից ծագել է այդ խնդիրը և թէև ամենակենսական հարց է, բայց մինչև այսօր նա դեռ չէ գտել իր կանոնաւոր լուծումը։ Առաջին հայեացքից այդ լուծումը շատ հեշտ է երևում. խաթիւ արդելել անարժան, անկիրթ, տգէտ քահանաների ձեռնադրութիւնը, տալ ժողովրդին, իբրև հովիւներ, որոշ կրթական ցենդ ունեցողներին,—ահա լուծումը։ Սակայն սիմոնականութեան զօրեղ ախտը այնքան վարակել է հայ հոգևորականութիւնը, որ այդ ամենարնական լուծումը մինչև այժմ անհնարին է դարձել։ Մակար կաթողիկոսից յետոյ Սինոդը հասկացաւ ժողովրդի էական պահանջը և իր կոչման բարձրութեան վրա կանգնեց այդ խնդրում. նա սկսեց անխնայ հալածել տգէտ տիրացուներին և այդ պատճառով առաջնորդների կողմից իբրև քահանայացու առաջարկվածների 90%-ը մերժվում էր։ Մակար կաթողիկոսի ժամանակ մի առաջնորդ փորձեց ընծայարանի միջոցով աջողեցնել ձեռնադրութեան գործը, կամ այսպէս ասած sauver les apparences, *գոնէ արտաքինը ոսկեօծել։ Բայց թէ այդ ընծայարան կոչվածը ինչ պատկեր էր ներկայացնում, մենք կը բերենք մի դէպք, որ հաղորդված է պաշտօնապէս «Արարատի» միջոցով։ Այդ ընծայարանում թխված մի տիրացուին Երևանի կոնսիստորիան ենթարկում է քննութեան. և ահա արձանագրութեան մէջ ինչ է ասված տիրացուի գիտութեան մասին. «ի զրաղիտութեան միջակ, բայց քահանայական գիտելեաց մէջ հմուտ»։ Դուրս է գալիս, որ տիրացուն կարող է անդրադէտ լինել, բայց քահանայական գիտելեաց մէջ հմուտ։ Եւ այդպիսի տիրացուին Երևանի կոնսիստորիան առաջարկում է ձեռնադրել. տարակոյս չը կայ, որ Սինոդը մերժում է։*

Եթէ Սինոդի կարդադրութիւնը մինչև այժմ իր ոյժի մէջ մնար, այդ կը լինէր և քահանայական խնդրի ամենարնական, ամենալաւ լուծումը։ Բայց նա չը մնաց և ահա նորից կնճռվեց խնդիրը և ստացաւ եկեղեցու ու ժողովրդի համար ամենավտանգաւոր ուղղութիւն, որ ձգտում է վերահաստատել մի մեռասակար կարգ։ Ինչով էին արդարացնում նախկին կարգի զեկավարները տգէտ քահանաների ձեռնադրութիւնը. ինչով էր սիմոնականութիւնը վարագուրվում։ Ահա այն սոփեստական պատճառաբանութիւնները, որոնք տկարամիտներին համոզեցուցիչ էին թվում. «Քանի որ կրթվածը, ուսում առածը չէ ցանկանում քահանայ լինել, իսկ ժողովուրդը առանց քահանայի թողնել անկարելի է, որովհետև մեռածին պէտք է թաղել, ծնվածին մկրտել, ամուսնացողներին պսակել, ուստի կամայ ակամայ ստիպված ենք կիսակիրթներին և տգէտներին ձեռնադրել»։

տումը՝ յայտնի չէ, միայն շատ և շատ ցանկալի է, որ նրանք, եթէ միայն այդպիսիներ եղել են, օգնէին Վեհափառի մտադրութեանը և հոգեոր իշխանութեան տրամադրութեան տակ դնէին Էջմիածնի ընդարձակ, բերրի հողերը չահագործող ջրի համար անհրաժեշտ գումարը, որով մի լաւ գործ կատարած կը լինեն։

Ս—Ն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Բագու, մայիսի 10-ին

Սկսած մօտ 1880 թուից մինչև այսօր լրագրութեան մէջ յաճախ երևում են հանգուցեալ Անդրէաս Խանդամիրեանցի կտակած գումարների մասին զանազան անձիւդ լուրեր։ Յայտնի է Շուշու հայ հասարակութեան, որ այդ գումարները դեռ 1892 թուին պէտք է գործադրութիւն ստանային։ Այդ մասին մինչև անգամ նոյն տարվայ «Մշակում» յայտարարված էր։

Բայց հարց է ծագում, արդեօք, ճշմարիտ, այդ գումարները ստացել են նպատակայարմար գործադրութիւն։ Մենք կը պատասխանենք՝ ոչ։ Ինչ կը նշանակի,—կտակած գումարներից 20 հազար ռուբլի տալիս են թեմական դպրոցին, որի տուրքերով պէտք է օգտվեն աղքատ դասակարգի որդիքը, ինչպէս ուսումնարանի սաներ, իսկ օգտվում է հանգուցեալի կտակատար—փեսան, Յակովբ Ուրբելեանց, ստանալով տարեկան 600 ռուբլի, իբր հոգաբարձական ժողովների քարտուղար—մի ռոճիկ, որը 9000 ռուբլի բիւդժէտ ունեցող դպրոցի համար չատ ծանր պէտք է երևայ։ Եթէ առաջներումը պահում էին կտակատար Ուրբելեանցին (ի դէպ է ասել, նիւթական մի բոլորովին ապահովված մարդ), այդ նրա համար էր, որ դպրոցի հոգաբարձութիւնը վախենում էր, որ մի գուցէ Ուրբելեանց զրկէ (sic) դպրոցը, բայց այժմ էլ խօմ վախ չը կայ, էլ ինչու համար են հարիւրներ ծախսում. չէ՞ որ Անդրէաս Խանդամիրեանց իր կտակած գումարով կենսաթոշակ չէ նշանակել իր փեսային։

Բացի վերոյիշեալ 20 հազար ռուբլուց, կը-տակված փողերից 30 հազար ռուբլի յատկացրած է Շուշու Մարիամեան օրիորդաց դպրոցի շինութեան և դպրոցի եկեղեցուն. երկու երեք տարի է անցել, բայց գործը դեռ մնում է քնած, և այդ էլ այն ժամանակ, երբ դպրոցը չունի նիւթական միջոցներ, իսկ տան վարձ է տալիս տարեկան 800 ռուբլի։ Ասենք գործի խոչնդոտները ի դիմաց թեմական առաջնորդի և իր արբանեակների (իմա կտակակատարների) հեռացված են սինոդի որոշումով և դեռ անցեալ ամառ ճարտարապետին էր յանձնած, պ. Ստեփան Իշդաչեանցի և ուրիշների միջոցով, կազմել դպրոցի մակարդակը։ Բայց ահա մէկ տարի է անցել և իմ բացակայութեան միջոցին ոչինչ չէ արված, և դպրոցի շինութեան գործը մնում է առկախ։

Զարմանալի մարդիկ են շուշեցիները. երբ դեռ կտակած գումարները հանգուցեալի ժառանգից չէին ստացված, նրանցից անկախ պատճառներով, աղաղակում էին, գոռում, գոչում էին՝ բարձրացնում, որ ժառանգները օգտվում են, ուզում են սեփականացնել կտակած գումարը. բայց այժմ, քանի որ բոլոր իրաւունքները իրանց ձեռքերումն է և ոչ ոք չէր էլ երազում, որ մի օր Շուշու զըպրոցական հասատաութիւնները ահագին գումարների տէր կը դառնան, լռել են և ոչինչ չեն ուզում անել։ Գուցէ տարիներ կանցնեն և ընտանեաբար կը վարվեն այդ փողերի հետ էլ, ինչպէս և շատ հասարակական գումարների հետ արել են։ Օրինակները հեռու չեն. վերցրէք հէնց թեմական դպրոցի գումարները։

Տիգրան Խանդամիրեանց

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լսում ենք, որ գաղթականների մի զօրեղ հոսանք է նկատվում Վանի նահանգից դէպի Պարսկաստանի սահմանները։

—

Մաքսուտ Սիմոն-պէյի սպանութեան փորձի մասին Կ. Պոլսի լրագիրները հաղորդում են հետեւեալ մանրամասնութիւնները. «Սիմոն պէյ իր զրասենեակը երթալիս պատին տակ կեցած երկու հոգի իրեն մօտեցան և մին, որ բէվոլվեր մը ունէր ձեռքը, կրակ ըրաւ Սիմոն պէյի վրա։ Գնտակը թեւին տակէն կուշտը մտաւ։ Սիմոն պէյ դեռին ինկաւ աղաղակելով, մինչ եղբայրը, Սեպուհ պէյ, որ զրասենեակը կը գտնուէր, բէվոլվերին պայթումէն դուրս վազելով իր եղբօրը քով կը հասնէր։ Երկու սպաննիչները նոյն հետայն բռնուեցան։ Զորս կողմէ օգնութեան փութացին Սիմոն պէյի։ Ժամը 5-ին, Սիմոն պէյ փոխադրվեցաւ Օրթագիւղ, իր ծովեղերեայ ապարանքը։ Բժշկական խորհրդակցութիւնները կը շարունակվին հիւանդին մօտ, որուն բացարձակ հանգիստ ապսպրված է։ Որոշուած է առժամապէս գնտակը չը հանել, եթէ հիւանդի վիճակին մէջ ծանրացում յառաջ չի գայ։ Սպանութեան փորձին լուրը առնելուն պէս ոստիկանութեան նախարար Նաղըմ պէյ Ղալաթիա եկաւ Սիմոն պէյի մօտ, ուր մնաց բաւական ատեն։ Երկու սպաննիչներն են Ստեփան Ահարոնեան և Թադէոս Յարութիւնեան։ Երկուքն ալ Սեբաստացի են»։

—

Երկրագործութեան մինիստրութիւնը, ամեն տեղերից տեղեկութիւններ ունենալու նպատակով, հրաւիրել է մօտ 7 հազար մշտական թղթակիցներ։

—

Մեզ հաղորդում են մի անսպասելի լուր.—Թիֆլիսի առաջնորդը քանդել է ս. Գէորգ եկեղեցու պատգամաւորների ընտրութիւնը, որ տեղի ունեցաւ սրանից մօտ երկու ամիս առաջ, և նշանակել է նոր ընտրութիւն։

—

Մեզ հաղորդում են, որ Հայի-Կարուլ կայարանում, ամսիս 25-ին սպանել են Նիկողայոս Տէրեանցին (Տէր-Մկրտչեանց)։ Սպանութեան պատճառը առ այժմ յայտնի չէ։

—

«Հայրենիք» լրագրում կարդում ենք. «Թորէն Ս. վարդապետ Ստեփանէ թարգմանած է Թօլմաստի Կրէյցերեան Սօնատն և հազար օրինակ տպագրել տալով՝ նուիրած է Միացեալ ընկերութեանց»։

—

Թիֆլիսի ազնուական կալուածական բանկի ընդհանուր ժողովը վերջացաւ ընտրութիւններով։ Բանկի վարչութեան նախագահի պաշտօնի համար քուէարկվեց միմիայն իշխան Իլ. Ճավճավաձէ, որը և վերընտրվեց ձայների մեծ առաւելութեամբ։ Ընտրվեցին նոյնպէս վարչութեան և վերատեսուչ մասնաժողովի անդամներ։

—

Վաղը, շաբաթ, ամսիս 28-ին, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում տեղի կունենայ այդ ընկերութեան անդամների մի մասնաւոր խորհրդակցութիւն, որի նպատակը կը լինի նշանակել թեկնածուներ փոխնախագահութեան համար։ Այժմեան փոխնախագահ Շիմանովսկին յայտնել է, որ նա, զբաղված լինելու պատճառով, թողնում է իր պաշտօնը։

—

Պետերբուրգից հեռագրում են Մոսկվայի լրագիրներին, որ մայիսի 27-ին Պետերբուրգում պէտք է կայանար ռուսաց երկաթուղիների ներկայացուցիչների ժողովը։

—

Թիֆլիսի նահանգի ազնուականների ժողովը սկսել է իր պարապմունքները։ Տեղական ռուս լրագիրները հաղորդում են, որ ազնուականութեան այժմեան պարապուլս իշխան Մաղալով Պետերբուրգից հեռագրով յայտնել է, որ հրաժարվում է քուէարկվելուց այդ պաշտօնի համար։

—

Հինգշաբթի, ամսիս 26-ին, կալուածական բանկի թատրոնում Կարա-Մուրզայի խումբը տուաց իր երրորդ համերգը, որը բաղկացած էր երկու բաժիններից։ Թատրոնը լի էր հանդիսականներով։ Համերգի առաջին բաժանմունքը անցաւ միջակ աջողութեամբ, իսկ երկրորդ մասը պատճառեց հանդիսականներին մեծ զուարճութիւն։ Ամենից մեծ տպաւորութիւն թողեցին ժողովրդական երգերը, որոնք խմբական երգեցողութեան մէջ դուրս են գալիս շատ ներգաշնակ և ախորժելի։ Օրվայ տօնին համապատասխան «Ջան-գիւլումը», ինչպէս և մի քանի ուրիշ երգեր, կրկնվեցին հանդիսականների խնդիրքով։

—

Կ. Պոլսի «Ծաղիկ» շաբաթաթերթը, որ մի քանի ժամանակից ի վեր չէր հրատարակվում, նորից սկսել է լոյս տեսնել մի նոր խմբագրական մարմնի ղեկավարութեամբ։

—

ԿԱՐՍԻՑ, Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութիւնը ուղարկել է մեզ հետեւեալը. «Յարգելի խմբագրութեանդ՝ յօգուտ գաղթական սովեալների մայիսի 12-ին ուղարկած 100 ռուբլին վարչութիւնս այսօր ստացաւ, որի համար պարտք է համարում յայտնել իր խորին շնորհակալութիւնը յարգելի խմբագրութեանդ և նուիրատուներին»։

—

ՊԵՍԱՏԻԳՕՐՍԿԻՑ մեզ գրում են. «Նորերս այստեղ կայացաւ երէցփոխական ընտրութիւն. ձայների ահագին մեծամասնութեամբ, ընդդէմ մէկի, վերընտրվեց այժմեան երէցփոխ Բաղդասար Խոջայեան, որը յայտնի է իր երկարամեայ բարեխիղճ ծառայութեամբ։ Շուտով լինելու են այստեղի միդասեան երկսեռ դպրոցի համար մի հոգաբարձուի և նրա անձնափոխանորդի ընտրութիւններ. այդ պաշտօնների համար ամենայարմար ընտրելիներ կարելի է համարել այժմեան հոգաբարձուներ՝ պ.պ. Ղազարոս Ավէշնիկեան և Գէորգ Մանդալեան, որոնք մինչև այժմ հասարակական ասպարիզում առհասարակ շատ օգտակար են եղել և անկասկած ապագայում էլ կը շա-

---

ընդհանուր բառով՝ տիրացուարան և որոնք ուրիշ նպատակ չունեն, եթէ ոչ մի կերպ սրբադործել, կամ վարդապետել ապէտ քահանայացուների ձեռնադրութիւնը։ Եւ ճշմարիտ, եթէ դիտաւորութիւն կայ այդ ընծայարանների մէջ ուսեալ քահանաներ պատրաստել, այն ժամանակ ինչի համար են թեմական դպրոցները, ճեմարանը։ Եթէ վերջիններս համապատասխան չեն իրանց կոչման, բարեկարգեցէք այն ժամանակ նրանց, փոխանակ ծիծաղելի տիրացուարաններ հաստատելու։ Թէ որքան կրիտիկայի են դիմանում այդ տիրացուարանները, կարելի է դատել նրանից, որ երկու շաբաթվայ ընթացքում Երևանի տիրացուարանի մէջ կարելի է եղել թիւել 21 քահանայացուներ և ուղարկել Սևան ձեռնադրվելու, ժողովրդի աչքից հեռու։

Մենք հանդիսատես ենք մի չատ տարօրինակ երևոյթի։ Ամենքը գոռում, գոչում, ճգնում են համոզել, ապացուցանել, որ հակառակ են ապէտ քահանաների ձեռնադրութեան, որ պէտք է կըրթեալ, ուսեալ քահանաներ ունենալ։ Ամենքը այնպէս են ցոյց տալիս, որ ցանկանում են միմիայն ուսեալ քահանաներ ունենալ. բայց միւս կողմից ոչ ոք արդեօք չէ դնում այն հոսանքին, որ վերջերս սկսվել է։ Հապա որտեղից են այդ բոլոր ապէտ տիրացուները թէ ու թիկունք ստացել, ո՞վ է նրանց յուսադրողը։

Այդ բաւական չէ. կեղծաւոր փարիսեցիները ողների արանքում հասկացնում են խաւարամիտ մամուլի մէջ, որ ուսեալ քահանաները մեզ համար դեռ վաղաժամ են. իսկ մի արտասահմանեան թերթ ուղղակի կրկնում է, Էջմիածնում նստած մի թղթակցի բերանով, թէ ճիշդ է, Արիստակէս սրբազանի ձեռնադրած քահանաները ուսեալ և կրթեալ մարդիկ են, բայց բարոյականապէս փչացած։ Ուրեմն, լաւ հասկացէք, կըրթված քահանաները բարոյապէս փչացած են, ergo, աւելի լաւ են ապէտ քահանաները...

Այդ կատարեալ զրպարտութիւն է։

Ամենքին յայտնի է, որ Արիստակէս եպիսկոպոսը իր առաջնորդութեան ժամանակ Թիֆլիսում ձեռնադրել է տասնեակ թէ բարձրագոյն և թէ միջնակարգ ուսում ստացած քահանաներ, ինչպէս և Էջմիածնում վերջին տարիներում ձեռնադրել է նոյնպիսի ուսում ստացած մօտ տասն վարդապետներ, այնպէս որ այժմ թէ Թիֆլիսի թեմում և թէ Էջմիածնում աչքի ընկնող քահանաները և երիտասարդ վարդապետները նրա ձեռնադրածներն են։ Եթէ ապէտ քահանաների ձեռնադրութեան ջատագովները այդ կրթված, ուսում առած քահանաներին ևս համարում են բարոյապէս փչացած, այն ժամանակ էլ մէջտեղ ո՞վ է մնում բարոյական։ Եւ վերջապէս, նախ քան զրպարտելու, նախ քան ասելու, թէ ուսեալ քահանաները բարոյապէս փչացած են, պէտք է այդ առարկութիւնը ապացուցանող զօրաւոր փաստեր ունենալ։

Ապէտ քահանաների ձեռնադրութեան կողմնակիցները զուր են կարծում, թէ Արիստակէս եպիսկոպոսը զինվելով նրանց դէմ, մի անլուր ճշմարտութիւն է քարոզում, կամ պաշտպանում. ոչ, նա պաշտպանում է մի ամենահասարակ ճշմարտութիւն, որին խեղամուտ է եղել նոյն իսկ ամբոխը. Արիստակէս եպիսկոպոսի հակառակորդները իրանց վարմունքով միայն ապացուցանում են, թէ որքան ողորմելի են իրանք, որ նոյն իսկ ամենահասարակ ճշմարտութիւնն անգամ ըմբռնելու անկարող են։

Քահանայական խնդրին դեռ դարիս սկզբին ամենալաւ լուծում տուել է հայոց եկեղեցու ամենագովելի հայրապետներից մինը, որը, ինչպէս շատ բաներում, նոյնպէս և այդ խնդրում անզուգական է հանդիսանում։

Զարմանալի դիւթական յատկութիւն է պարունակում իր մէջ Ներսէս անունը։ Բոլոր Ներսէսները հռչակաւոր և լաւ կաթողիկոսներ են եղել. Ներսէս Մեծը, Ներսէս Շինող, Ներսէս Շնորհալի, Ներսէս Լամբրոնացի և վերջապէս Ներսէս Աշտարակեցի. ամեն մի Ներսէսի անուան հետ հայ պատմական կեանքի մէջ մի ամբողջ էպօխա է կապված։

Ստանձնելով Վրաստանի առաջնորդութիւնը 1814 թուին, Ներսէսի առաջին գործը եղաւ եկեղեցական բարեկարգութիւնը։ Նա դատ թեմը լի ապէտ, սոսա քահանաներով. կազմել տալով վիճակագրութիւն, գտաւ, որ հայերը Վրաստանի թեմում ունեն 140 եկեղեցի և 737 հոգևորականներ, և որովհետև ամբողջ թեմում 11,870 ծուխ կար, ուստի ամեն մի եկեղեցու վրա ընկնում էր 85 ծուխ, իսկ ամեն մի քահանայ ունէր 16 ծուխ և այդ պատճառով քահանաները վերին աստիճանի խեղճ և ողորմելի էին։ Ներսէսի հանճարեղ միտքը չատ չուտով ըմբռնեց, որ եկեղեցու զարգացման միակ ապահով և կարուկ միջոցը ուսեալ, կրթեալ քահանաներ ունենալն է և ապէտ, անուսում քահանաների հեռացնելն է. նա դիմեց ամենարմատական միջոցի. յայտնապէս կռիւ մղելով ապէտ քահանաների դէմ, նա աշխատեց նրանց թիւը քչացնել և այդ նպատակով կազմեց չատ ու հրամայեց, որ ամեն եկեղեցի ունենայ քահանաների որոշ թիւ, ծխերի քանակութեան համեմատ, իսկ աւելորդ քահանաները ժողովուրդ կամ ծուխ չունենան։ Այդ միջոցով կարելի էր փոքր ի չատէ դռել, մաղել քահանաներին և նրանց միջից լաւագոյներին ընտրել։ Բայց որպէս զի նրանց թիւը հետզհետէ նուազի և կարելի լինի ապէտների տեղ ուսեալներին դնել, նա դիմեց մի ուրիշ արմատական միջոցի, այն է՝ որոշեց ամենևին քահանայ չը ձեռնադրել և այդպէս էլ արաւ, և 1814 թուից մինչև 1822 թիւը, ամբողջ 8 տարի, միայն մի հատ վարդապետ ձեռնադրեց, իսկ կրթեալ, ուսեալ քահանայացուներ պատրաստելու համար նա յղացաւ և իրագործեց Ներսիսեան դպրոցը հիմնելու միտքը, և այն ևս այնպիսի ծանր և դժնդակ ժամանակներում։ Ներսէսը կարող էր աւելի դիւրին միջոցի դիմել. հիմնել վանքերում ընծայարաններ, բայց նա լաւ գիտէր, որ այդ ընծայարանները, ժողովրդի աչքից հեռու և վարդապետների ղեկավարութեան յանձնված, միայն պէտք է ծառայէին մարդկանց աչքին թոզ փչելու և բուն նպատակը չը պէտք է իրագործվէր։

Եւ ահա, ամբողջ 80 տարիներից յետոյ մեր հոգևորականութիւնը դեռ այնքան չը հասունացաւ, որ ըմբռնէր հանճարեղ Ներսէսի վեհ միտքը։

Հ. Ա.

բունակեն նոյն եռանդով և բարեխղճութեամբ գործել։

—

ԱՂԴԱՇԻՑ մեզ գրում հետևեալը, որը տպագրում ենք, պատասխանատուութիւնը հաղորդողի վրա թողնելով. «Մի քանի օր առաջ մեր գաւառի խոշկաշէն գիւղում մի վայրենի դէպք պատահեց. Երեկոյեան ժամի 5-ին վիրաւորեցին նոյն գիւղացի Աւետիս Սարգսեանցին հրացանով։ Հրացանը արձակել են Սարգսեանցի հարևան մնից. չարագործները վիրաւորվածի հօրեղբայրներն են, որոնցից չորսը այժմ բանտարկված են։ Վիրաւորվածը յայտնել է, թէ չարագործները անցեալ տարի թունաւորեցին նրա եղջերը, որը մեռաւ. մի քանի ամիս առաջ սպանեցին միակ չափահաս որդուն, իսկ այժմ էլ իրան են ուզում սպանել։ Պատճառն այն է, որ չարագործները ուզում են նրանց կայքը իրանց ձեռքը գցել։ Ի դէպ, հինգ օր սրանից առաջ Աղդաշում ինքնասպանութիւն գործեց 20 տարեկան մի երիտասարդ, Նիկոլա Տէր-Զաքարեանց անունով։ Հանգուցեալը եղել է Ներսիսեան դպրոցի աշակերտ. ինքնասպանութեան պատճառը յայտնի չէ»։

—

ՔԱՐՎԱՆՍԱՐԱ գիւղից մեզ գրում են. «Մարտ ամսին մեր գիւղի ուսումնարանի նորընտիր հոգաբարձուն հաստատված է Վեհափառի կողմից, բայց հինը մինչև հիմա չէ բարեհաճում յանձնել գործերը. մինչև Երբ։ Հրաւիրում ենք թեմական տեսչի ուշադրութիւնը»։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ գրում են. «Աղտաֆայից դէպի Ալէքսանդրօպոլ տանող խճուղին շարունակ հաց է տեղափոխում երկաթուղուց դէպի Շիրակ։ Ճանապարհը շատ տեղ բռնված է ցորենի և ալիւրի սայլերով։ Սայլերի երթևեկութիւնը յիշեցնում է միայն պատերազմական տարիների շարժումը։ Հացի պահանջը Շիրակի գիւղերում դեռ շատ մեծ է»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈԼԳԱՐԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ

—

Մայրաքաղաքի լրագիրները մանրամասն տեղեկութիւններ են հաղորդում Բոլգարիայում տեղի ունեցած վերջին անցքերի և Ստամբուլովի հրաժարականի մասին։ Պատմում են, որ Ստամբուլով դեռ մի շաբաթ առաջ վճռել էր հրաժարական տալ և այդ մասին հաղորդեց պրինց Ֆերդինանդին Վիէննա, որը դրա պատճառով չտապեց Սոֆիա վերադառնալ։ Սոֆիա հասնելով երկուշաբթի գիշերը, նրան դիմաւորեցին բոլոր մինիստրները, բացի Ստամբուլովից, որը հիւանդ ձևացաւ։ Ստամբուլովի հրաժարականի առաջին լուրերը հաղորդեց «Agence Balcanique» կիսապաշտօնական թերթը հետևեալ բառերով. «Ներքին գրութիւնը պարզելու ցանկութեամբ դրված և երկարատև խիստ կուից յոգնած՝ Ստամբուլովի մինիստրութիւնը ամբողջապէս հրաժարական տուեց։ Երեկոյեան պրինց Ֆերդինանդը կանչեց պալատ Ստամբուլովին խորհրդակցելու նրա հետ, և այդ հանդամանքից երևում է, որ պրինցը ցանկութիւն ունէր համոզել մինիստր-նախագահին չը հրաժարվել իր պաշտօնից։ Ապա դրանից յետոյ պալատ կանչվեցին զիմադրական կուսակցութեան պարագլուխները՝ նախկին մինիստր-նախագահ Բոգդանովով և արդարադատութեան նախկին մինիստրը, թէպէտ դրա հետ միասին լուր տարածվեց, որ իբր թէ նոր մինիստրութեան կազմակերպութիւնը կը յանձնվի արտաքին գործերի մինիստր Գրեկովին, որը Ստամբուլովի մինիստրութեան անդամ էր։

«Polit. Corresp.» լրագրի Սոֆիայի թղթակցի խօսքերով, Ստամբուլովի հրաժարականը շատ էլ անսպասելի չէր, որովհետև դինուորական մինիստր Սավովի նորերս տուած հրաժարականից յետոյ, նախատեսնվում էր փոփոխութիւն մինիստրութեան մէջ։ «Բէյտերի գործակալութեան» վկայութեամբ, մինիստրութեան հրաժարականին սպասում էին, որովհետև մինիստրները մի քանի ժամանակից այն համոզման եկան, թէ անհրաժեշտ է վերջ տալ մի քանի տարաձայնութիւններին կառավարչական շրջաններում և մասնաւորապէս Ստամբուլովի և պրինցի մէջ։ Այդ առիթով, «Standart» լրագրի թղթակիցն ասում է, որ Ստամբուլովի և Ֆերդինանդ պրինցի մէջ եղած տարաձայնութիւնը վաղուց արդէն ոչ ոքի համար գաղտնիք չէր։ Բոլգարական իշխանը յաճախ դանդաղում էր Ստամբուլովի ինքնակամութեան և մանաւանդ այն բանի դէմ, որ Ստամբուլով պատշաճաւոր յարգանքով չէր վերաբերվում իշխանի երիտասարդ կնոջը։ Ստամբուլովի «Свобода» օրգանում անցեալ աշունքից արդէն անդադար յարձակումներ էին տպվում պրինցի դէմ։

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Մինխէն, մայիսի 16-ին

«Աշխարհը տղամարդու տունն է, իսկ տունը կնոջ աշխարհը»,—դարերից ի վեր այդ առածը խորը արմատ է ձգել իւրաքանչիւր մի գերմանացու մէջ։ Կինը կոչված է իր մայրական պարտականութիւնները կատարելու, նա կոչված է ընտանիքը կառավարելու և ընտանեկան նեղ շրջանից դուրս նա չը պէտք է ոտք կոխէ,—ահաւասիկ գերմանացու կարծիքը կնոջ մասին, նրա խորը համոզումը։

Կնոջ այդ հասարակական տեսակէտից սաորադրեալ և սահմանափակ դրութիւնը վաղուց է, որ դոյութիւն ունի։ Նա սկիզբ է առնում անյիշատակ ժամանակներից, երբ մարդկութիւնը քաղաքակրթութեան դեռ ևս ամենաստոր աստիճանի վրա էր գտնվում։ Երկար դարերի ընթացքում կինը մնաց ճնշված տղամարդու փականքներում, երկար անտրտունջ տանում էր նա իր խղճալի կացութիւնը։ Ստրուկ, ամուսնու հաճոյքներին հլու հպատակ՝ նա այն աստիճան ընթացել էր, որ միանգամայն անզօր էր բողոքելու տիրապետող պայմանների դէմ։

Սակայն ժամանակի ընթացքում մարդկային երկու սեռի փոխադարձ յարաբերութիւնները փոքր առ փոքր տարբեր կերպարանք առան։ Քաղաքակիրթ աշխարհում մենք արդէն իրագործված ենք տեսնում կնոջ «էմանսիպացիայի» առաջին քայլը. դա կնոջ անտեսապէս «անկախ» դրութիւնն է, որ առաջ եկաւ, որպէս արդասիք կապիտալիստական արդիւնաբերութեան։

Գերմանական սոցիալ—դեմոկրատները կանանց խնդրի, կնոջ մասին խօսելով, սովորաբար համեմատում են նրան վարձկան բանւորի հետ։ Արդարև, ինչով է տարբերվում այժեան կինը այժմեան պրոլետարիայից. երկուսն էլ ուրիշի կամքին կոյր հպատակ, երկուսն էլ ճնշված, իրաւազուրկ։ Կինը դեռ շատ դէպքերում կրկնապատիկ է հարատահարված։ Այդպէս եղել է ամեն ժամանակ. պատմական բոլոր շրջաններում կնոջ դրութիւնը սերտ կերպով կապված է եղել ժողովրդի և ստորին խաւի, աշխատաւոր «մասսայի» դրութեան հետ։ Այդպէս է և այժմ։ Միշտ տնտեսական երևոյթներն են, որ պայմանաւորում են կնոջ բարձր, կամ ստոր դիրքը հասարակութեան մէջ։

Քանի դեռ հասարակական արդիւնաբերութիւնը հիմնված էր աշխատանքի նախնական գործիքների վրա, քանի դեռ արդիւնագործութեան մէջ տիրապետում էր աշխատանքի բաժանութեան հին, նահապետական ձևը, կինը, աշխատաւոր կինը չէր կարող լայնացնել իր գործունէութեան սահմանները։ Նրա աշխարհը այն ժամանակ իսկապէս տունն էր, ուր կենտրոնացած էին նրա մտաւոր և ֆիզիկական բոլոր ոյժերը։

Բայց անցան այն ժամանակները։ Մեքենաները մինը միւսի ետևից աշխարհ եկան և արմատապէս յեղափոխեցին իրերի դրութիւնը։ Խոշոր ինդուստրիան ամենուրեք ահագին առատութեամբ և անհամեմատ աւելի էժան գնով սկսեց մատակարարել կենսական պիտոյքները։ Կինը իր ինչին արդիւնագործութեամբ անկարող լինելով մրցում տանելու, ստիպվեց կամաց կամաց յետ քաշվել իր նախկին գործունէութիւնից։

Ուրքան աւելի կատարելագործվում էին մեքենաները, նոյնքան աւելի զարգանում էր ինդուստրիան, և աւելի քայքայվում էր կնոջ տնային արդիւնագործութիւնը։ Այնուհետև նա դարձաւ իրօք մի «Hausfrau», որի պարտականութիւնը կայանում էր եփելու, կարելու, մանելու մէջ։ Սակայն այդ դրութիւնն էլ վաղանցուկ էր. միայն կարելով, մանելով անկարելի էր ապրուստ անել։ Հացի խնդիրը կամաց կամաց կնոջ ևս մղեց դէպի ինդուստրիա...

Այդպիսով կնոջ համար սկսվեց արդէն մի նոր գործունէութիւն. ընտանիքի նեղ շրջանից նա անցաւ հասարակական ասպարէզ։ Նա դարձաւ ինքնուրոյն մարդ, անտեսապէս անկախ. նա այլ ևս կարիք չունէր ամուսնու օգնութեան, քանի որ ինքն էլ աշխատող ձեռքեր ունէր։

Այդպէս ուրեմն, արդիւնագործութեան նորամուտ պայմանները հիմքից կործանեցին կնոջ գործունէութեան թէ տնտեսական, և թէ հասարակական հիմունքները։ Այն օրից, երբ կինը թողեց տնտեսական ստրկութեան լուծը և ընկսեց գործարան յաճախել, այն օրից նա արդէն դրեց իր սեռի ապագայ «լիակատար» ազատութեան հիմնաքարը։

Գործարանական աշխարհում մեքենաները հետզհետէ բարձրանալով, հեշտանում էր աշխատանքը, իսկ աշխատանքը հեշտանալով, օր օրի վրա ստուարանում էր կին աշխատաւորների թիւը ֆաբրիկաներում։ Կինը այլ ևս իր ընտանիքի գործածութեան համար չէր արդիւնագործում, այլ նա իր աշխատանքի արդիւնքներն արդէն հասարակական վաճառանոց էր արտահանում։

Սակայն ամուսնու հպատակութիւնից ազատվելով, կինը այժմ ենթարկվեց կապիտալիստի կամայականութիւններին։ «Տնային ստրկուհուց» նա դարձաւ «վարձկան ստրկուհի»։

Կին աշխատաւորների հոսանքը ֆաբրիկաներում զգալի կերպով իջեցրեց գործաւորի վարձը։ Աշխատանքը, մանաւանդ կնոջ աշխատանքը, չափազանց էժան էր գնահատվում։ «Կինը թոյլ արարած լինելով, ֆիզիկական յարատև աշխատանքի ընդունակ չէ»,—ահա թէ ինչ էր առարկում բուրժուան։

Սակայն բուրժուական հասարակութիւնը, որ ամենուրեք իր շահերն է որոնում, ինքը վաղուց արդէն հասկացել է, թէ շահագործելու որպիսի հիանալի առարկայ է կինը։ Նա աղտամարդի պէս արտնջող չէ, նա միշտ խոնարհ է, լռիկ, հնազանդվող. բացի այդ, նա աւելի բաղմատեսակ պարապմունքների ընդունակ է։

Ժամանակի ընթացքում, չնորհիւ բուրժուայի կեղեքումներին, չնորհիւ արդիւնաբերութեան տիրապետող ձևին, գոյացաւ մի ամբողջ դասակարգ հարատահարված կին աշխատաւորների—կին պրոլետարիատ։ Իսկ մի այլ կողմից հանդէս եկաւ անգործ, «աշխատաղուրկ» (arbeitlos) կանանց մի ստուար բաղմութիւն, որ իր անապահով կացութիւնից զրկված՝ ինքն իրան նետեց կենսական մրցութիւնների անդունդը...

Ստատիստիկայի վկայութեամբ, 1877 թուականին Մինխէնում ստատիստիկան հսկողութեան տակ գտնված անառակ կանանցից առնուազը 203 հոգի կին աշխատաւորներ էին։ Այդ դեռ յայտնի, բացարձակ անառակ կանայք էին. բայց որքան ստուար էր նրանց թիւը ծածուկ խորշերում, ուր պոլիցիայի աչքերը դժուար էին թափանցում... Բացի այդ, վերոյիշեալ փաստը նկատված է 17 տարի սրանից առաջ, երբ դեռ համեմատաբար քիչ էր զարգացած խոշոր ինդուստրիան։ Նոյն ստատիստիկան հաստատում է, որ «պրոստիտուցիային» անձնատուր են լինում «մեծ մասամբ» ֆաբրիկաների կանայք, որոնց աշխատանքը վատ է վարձատրվում. խօսք չը կայ, նաև այնպիսիները, որոնք ֆաբրիկաներում տեղ չը գտնելով, բոլորովին զուրկ են աշխատանքից։

Այդ բոլոր փաստերը ինքն ըստ ինքեան ապացոյց են, որ շատ էլ երկար չի տևի իրերի ներկայ դրութիւնը։ Շարժումը օր օրի վրա լայն ծաւալ է ստանում. իսկ կին պրոլետարիատի յայտնվելը, նրա ծայրահեղ դառն, անտանելի վիճակը աւելի է փութացնում գալոց յաղթանակը, այն է՝ ամբողջ աշխատաւոր դասակարգի տնտեսական և քաղաքական խնդրի իրագործումը։

Միք. Ցով.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Սոֆիայից հեռագրում են հետևեալը. «Ստամբուլովի հրաժարականի անմիջական պատճառն էր Կօբուրգեան պրինցին նրա ուղարկած խիստ նամակը։ Նա պահանջում էր պրինցի համաձայնութիւնը պաշարման դրութիւն մտցնելու համար, բայց պրինցը մերժեց Ստամբուլովի այդ պահանջը»։

—«Ind. Belge» լրագիրն ասում է, որ այն ժամանակ, երբ Պարիզի համալսարանում գանդատներ են լսվում, թէ ուսանողների թիւը գնալով աճում է, այն է 11,914 ուսանողներ կան, իտալական վեց համալսարաններում՝ Կատանիայում, Պալերմոում, Մոդենում, Սիէպպում, և Սասարիում փակվում են համալսարանները՝ ունկնդիրների պակասութեան պատճառով։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մօտ ժամանակներս հին Տրոյա քաղաքում մի շատ կարևոր հնագիտական գիւտ են արել։ Այդտեղ գտել են Հեկտորի կնոջ՝ Անդրոմախի գերեզմանը։ Նրա վերնագիրը ոչ մի կասկած չէ թողնում, որ այդ նրա իսկական գերեզմանն է։

* * *

Խոլերայի համար կազմված աւստրիական սանիտարական խորհրդում այս օրերս բժշկապետ Ֆոն-Կուսի կարդաց մի զեկուցում խոլերայի մասին։ Զեկուցանողն ասեց, որ թէ ասիական և թէ եւրոպական Թիւրքիայում խոլերան դեռ ևս շարունակվում է, թէպէտ և փոքր չափերով։ Մանաւանդ երկիզագլի լուրեր են գալիս Տրապիզոնի, Էրզրումի, Կ. Պոլսի և Ադրիանուպոլի վիլայէթներից։ Խոլերան ձմերից և Ռուսաստանի մի քանի տեղերում, երևաց նաև Գալիցիայում, ուր սահմանի վրա գտնված երեք գիւղերում մէկ ամսվայ ընթացքում հիւանդացան 40 և մեռան 18 հոգի։ Այդ տեղերում խոլերան այժմ ակնյայտնի կերպով թուլանում է։ Ապա խոլերան դեռ ևս գոյութիւն ունի Ֆորտուգալիայում, նոյնպէս և Ֆրանսիական Ֆլինիստէր և Մօրբիդան դէպարտամենտներում։ Ուրեմն Եւրոպայում կան խոլերայի զանազան բուներ, և այդ պատճառով, եթէ սանիտարական պայմանները անբաւարար կը լինեն, խոլերան կարող է տարածվել։ Երկար վիճաբանութիւններից յետոյ, սանիտարական խորհուրդը այն միտքը յայտնեց, որ թէպէտ դրութիւնը երկիզագլի չէ, այնուամենայնիւ խոլերայի տարածման վտանգը գոյութիւն ունի, ուստի անհրաժեշտ է ամենախիստ հսկողութիւն։

* * *

Միստիցիզմը և սնոտիապաշտութիւնը այնքան խոր արմատ են ձգել նոյն իսկ իտալական ինտելիգենտ շրջանների մէջ, որ մինչև անգամ Հռոմի պաշտօնական «Observatore» լրագիրը հաստատում է, թէ մասսոնները շարունակ հաղորդակցութեան մէջ են սատանայի հետ։ Այդ բաւական չէ. իտալական մամուլը պատմում է իբրև իրողութիւն մի աւելի անհեթեթ բան. եթէ պապը զրկվեց 1870 թուին իր աշխարհական իշխանութիւնից, դրա պատճառը դարձեալ սատանան էր։ Ահա ինչպէս են գրում այդ մասին. «1870 թուին, Միլանում հաւաքվում են տասն և հինգ բարձրաստիճան մասոններ, որոնց թվում կային Կրիսպի, գեներալ Կադօրնա, Յուկի և այլն։ Նրանք զանազան երդումների միջոցով կանչում են սատանային, որ յայտնվում է կրակի և ծուխի մէջ։ Բէեզեբուղը վայրագ կերպով նայում է ժողովականների վրա և պոռում է,—«ժամանակը հասել է եկեղեցուն վերջնական հարուած տալու»։ Դրանից յետոյ նա անհետանում է։ Այդ անհեթեթ պատմութիւնը այնքան հաւատացողներ է ունենում նոյն իսկ սալոններում, որ ծերունի զօրապետ Կադօրնան հարկաւոր է համարում խիստ հերքում տպել, ասելով թէ «ինքն ներկայ չէ եղել այդ զարհուրելի ժողովին և չէ մտնակցել նրան, ուստի և ոչ կանչել է սատանային, ոչ ևս տեսել նրան»։ Եւ որովհետև Կրիսպի և միւսները լռութիւն են պահում, այդ լռութիւնը համարվում է իբրև համաձայնութեան նշան։ Մի ուրիշ միստիկական պատմութիւն ևս։ Բանից դուրս է գալիս, որ Լևոն XIII պապը անցեալ տարի սատանայի ձեռքը գերի է ընկած եղել և նրա տեղ երևացել է միշտ մի կեղծ պապ (սատանան), որ շատ նման է եղել Լևոն XIII-ին։ Խեղճ պապին գերութիւնից ազատելու համար ֆրանսիացի ուխտաւորներ հաւաքում են 50,000 ֆրանկ։ Երբ ոստիկանութիւնը ձերբակալում է այդ փողը հաւաքողներին, իբրև խարդախների, հասարակութիւնը սկսում է մեղադրել ոստիկանութիւնը, որ սա կամենում է արգելել բարի կաթոլիկներին՝ պաշտպանելու պապին սատանայի փորձանքներից։ Այդ բոլորից յետոյ զարմանալի չը պէտք է թվի, եթէ մի գեղեցիկ օր կը լսենք, որ Իտալիայի քաղաքներից մինում խարոյկի են դատապարտել մի նշանաւոր մասոն և նոյն իսկ առաջին մինիստր Կրիսպիին, իբրև սատանաների հետ յարաբերութիւն ունեցողի։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻԻՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 մայիսի։ Պապի մօտ ռուսաց մինիստր-բէզիդէնտ նշանակելու առիթով, «Journal de St. Petersbourg» լրագիրը մատնացոյց է անում այն մեծ նշանակութեան վրա, որ ունի Ռուսաստանի պաշտօնական յարաբերութիւնների վերականգնումն ս. գահի հետ. լրագիրն ասում է, որ դա իրերի բնական կարգի նշան և խաղաղութեան ու բարի համաձայնութեան գրաւական է ապագայում։ Լրագիրն ասում է, որ յարաբերութիւնների վերականգնումն բժշկարար ազդեցութիւն կունենայ ռուս կաթոլիկների վրա, պահպանելով հոգևորականութեան և հաւատացեալների մէջ այն հաւատարիմ հպատակութեան զգացմունքները, որ պապը քարոզում էր լեհացի եպիսկոպոսներին ուղղած իր կոնդակի մէջ։

ՊԱՐԻԶ, 27 մայիսի։ Պատգամաւոր Ցուսէն դատապարտված է տաս օրվայ բանտարկութեան և 100 ֆրանկ տուգանքի՝ գործադուլը խրախուսելու համար Տրինիտակում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վ. օրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. *վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւնների:*

Կ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. *աչքի և նեարդային հ.*

Դ. Դ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. *ներքին, երեխաների և կանանց հ.*

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—11½—12½ ժ. *ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.*

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—12½—1 ժ. *կանանց ց.*

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ *նեարդային և երեխայոց հ.*

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. *Սիֆիլսի և մէզի ու սեռական օրգանների հ.*

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ *ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:*

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ *քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խլխի, արեան, կաթի և այլն:*

Վճար 50 կ.: *Համախորհրդի (կոնսիլիումի) ու օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցումը ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ:*

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ: (№ 72)

ԱԲԱՍԹՈՒՄԱՆՈՒՄ

ՐԷՍՏՕՐԱՆ "ԿԱՒԿԱՋ,,

Կահաւորած սենեակներ: Եւրոպական և ասիական խոհանոց: Ստանում է կովկասեան լրագիրներ: Սենեակները յարմարեցրած թէ անհատների և թէ ներդաստանով բնակութեան: Գները ամենաչափաւոր: Ամարանոց Ղասապեանի, № 14:

(№ 60) 1—4

Ուղարկվում է „Մշակի" հետ միասին (մի մասը այս համարի հետ, միւս մասը յաջորդ համարի հետ) մի բրօշիւր „Իմ պատասխանը „Մուրճի" խմբագրին" վերնագրով: Փիլիպոս Վարդազարեանց

Վաճառվում է, քանդակազարդ ցէյալինի պատրաստած,

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԿԻՍԱՐՁԱՆԸ

Ծախվում է Թիֆլիսում, Եփրեմ Ծատուրեանի խանութում: Գինն է 10 ր. օտար քաղաքացիք ճանապարհածախսի համար պէտք է վճարեն 2 ռուբլի:

(№ 52) 5—5

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (28×18 սանտ.) պատկերը ճենապակու (ֆարֆորի) վրա տպագրված և պատրաստված Լօնդօնում, Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ, *ստացվել է արդէն Թիֆլիսում:*

Այս պատկերը, որ մեր երկրի համար էլ տեսնված նորութիւն է, անշուշտ կը գրաւի ամենանուրբ ճաշակ ունեցող զեղարուեստագէտի ուշադրութիւնն ու հրապոյրը: Այս պատկերը պատրաստված է այնպէս, որ պէտք չունի ոչ առանձին շրջանակի և ոչ էլ յենարանի: Անհրաժեշտ զարդ է ուսումնարանների, կոնսիստորիաների և ամեն մի գրագէտի սեղանի: Իւրաքանչիւր պատկերը ունի իր առանձին արկղը: Գինը Թիֆլիսում 3 ր. է, իսկ ճանապարհածախսով 4 ռուբլի:

Դիմել՝ Թիֆլիս „Աղբիւր" - „Տարազի" խմբագրութիւն: (Тифлисъ, ред. журнала „Агбюръ-Таразъ").

(№ 52) 4—4

Ում յայտնի է Երևանցի տելեգրաֆիստ ԼԵՒՈՆ ԲՕՆԲՕՇԵԱՆԻ *որտեղ լինելը, խնդրահարաբար խնդրում եմ յայտնել այս հասցէով:—ԿԱՐՍ,* Արշակ Խօջաէնեանթեան.

(№ 55) 2—2

ԼՈՒՍԱՆԿԱՐ ԲՕԻՆՕՎԻ ՄՕՏ

Վաճառվում են ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ լուսանկար պատկերները.

1) *Մեծադիրը, պատից կախելու, ճանապարհածախսով հանդերձ—3 ռուբլի:*

2) *Կաբինէտային, ճանապարհածախսով—40 կ.: Ցանկացողները պէտք է դիմեն այս հասցէով.*

Тифлисъ. Фотографія Роинова, на Эриванской площади. *Կարելի է ստանալ և վերադիր վճարով* (наложн. платежъ). (№ 51) 4—10

Ունենալով Արաքսի ափերում, „Ալի-Ղըզել" գիւղի մօտ, 200 **ԴԵՍԵՍԱՏԻՆ** ՏԱՐԱԾՈՒԹԵԱՄԲ ԱՄԱՅԻ ՀՈՂ *և չունենալով միջոց, նոյն իսկ դիւրին և ամենամօտ տեղից ջուր հանելու և ոռոգելու համար, դիմում եմ յայտնի փողատէր և հողասէր անձանց,—մասնակցել սոյն գործին, ջուր հանելու, հողը մշակելու համար: Յայտնում եմ միանգամայն, փորձերի վրա հիմնված, որ հողը արդաւանդ է և ամենաբերրի յատկութիւն ունի, ու օժտված է Արարատեան դաշտին յատուկ ամենայն տեսակ արտադրութեամբ:*

Մանրամասնութիւնների և պայմանների մասին դիմել,—Акстафа К°. „Надежда" Кяандарянцу.

(№ 48) 4—5 (2·)



Մեկ պակաս կրկնական ընկերութեան մէջ Թիֆլիսում և Բարում՝ Հասատի վերադարձի հետ՝ բարձրագոյն հաստատված դիպլոմներով:

Ձառման կրկնական դասընթացքներ՝ 4 ամիս մեկ ամսվա համար 10 ռուբլի:

№ 120. 90 թ. (4) 16—50

ԱԲԻՍ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ

Ա. *հատորի գինն է* . . . . . 3 ր.
Բ. *հատորինը* „ . . . . . 4 ր.

Վաճառվում է Խիղդեկեանի գրավաճառանոցում, Գօլովինսկի պրոսպեկտ:

Գրավաճառներին 10% *զիջումն:*

(№ 58) 2—10

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Հետևեալ մեծադիր պատկերները

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ	50 կ.,
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ (*սակաւ.*) . . .	1 ր.,
ՐԱՖՖԻ	40 կ.,
ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ	40 կ.,
ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆԻ (*սակաւ.*) . . .	1 ր.,

Գումարով զիջումն կը լինի: Վերադիր վճարով կարելի է ստանալ: Դիմել՝ Тифлисъ, Саркису Согомонянцъ. (№ 51) 3—4

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՐՕՍՍԻԱ"

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.

Ս. Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ՌՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում:

Ընկերութիւնը ընդունում է՝

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

այսինքն դրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեփական ծերութիւնը, բաժինքը աղջիկների համար, թոշակները աղների համար և այլն, առանձին չափաւոր պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ Ընկերութեան օգուտներին:

1894 *թվի յունվարի 1-ին «Ռոսսիա» ընկերութեան մէջ ապահովագրված էին* 28,246 *անձինք* 75,621,010 *ռուբլի դրամագլխով:*

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱՂԴ ԴԷՊՔԵՐԻՑ

թէ առանձին անձինքների, նոյնպէս և համագումար ապահովագրութիւններ գործարաններում ծառայողների և բանուորների,—պակասեցնելով ապահովագրական վճարները՝ դիվիդէնդի փոխարէն:

ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալուածքների (շինութիւնների, մեքենաների, ապրանքների, կահկարասիքի և այլն):

ՏՐԱՆՍՊՕՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, ցամաքային և ծովային. ապահովագրութիւն նաւերի:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, *սեփական տուն,* № 37), *Կովկասեան շրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ՝*

ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիևսկայա փ. տ. № 6. *և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում:*

Ապահովագրական տոմսակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար դժբաղդ դէպքերից՝ երկաթուղիներով և շոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրվում են նոյնպէս երկաթուղիների կայարաններում և շոգենաւային նաւահանգիստներում: (№ 42) 9—15

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ

ՏԷՐ—ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է երեխեկ, կիսաթոշակաւոր և թոշակաւոր աշակերտներ: Պատրաստում է կլասիքական գիմնազիայի, բէալական ուսումնարանի, կադետների կորպուսի և այլ միջնակարգ ուսումնարանների համար:

Թիֆլիս, Գանովսկայա փողոց, № 11, սեփական տուն:

(№ 35) (Եր. և շ.) 17—25

ԴԵՂ ԱԳՈՐԾ **Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ** ՊԱՀԵՍՏ ԵՒ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ զեղերի, մորթին զեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և անտեսական զործիքների, բացված է Կուկիայում, Վ. օրոնցովի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ:

(№ 67) 75—100 (Ե. շ.)

Ի. ԵԱ. ԲՐՕՆ ՖՕՆ ԲՐԵՆՆԷՐ

Յանձն է առնում ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ, ԴՐԱՍԵՆՆԱԿԻ *և* ԱՌԵՏՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆՆԵՐ *պահելու գործը ամբողջ տարվայ ընթացքում, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն և ուրիշ լեզուներով. ստուգում է զանազան առևտրական և արդիւնաբերական հաստատութիւնների հաշիւները և մատեանները, քննում, փակում, բանում, և կազմում է առևտրական մատեաններ. ընդունում է առևտրական մատեանների զանազան թիւրիմացութիւնների քննութիւնը և բացատրութիւնը:*

Այն անձինք, որոնք չունեն հաշւապահներ, բայց ցանկանում են ունենալ կանոնաւոր հաշւապահութիւն, կարող են ունենալ ՃԻՇՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՆՑ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՄԱՏԵԱՆՆԵՐ: *Մատեաններ պահելու համար վերցվում է տարեկան 100 ռուբլի և աւելի: Հասցէն* Елизаветинская, № 25, *ոստիկանական վարչութեան վերին յարկում:*

Ուսուցանում է:

ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԱԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Վճար { *Հաշւապահութեան ամբողջ կուրսի համար (2—3 ամիս)* 40 ՌՈՒԲԼԻ
{ *Արագագրութեան տեսական կուրսի համար (2 ամիս)* 50 ՌՈՒԲԼԻ

Պարապմունքներ լինում են ամեն օր, երկու ժամվայ ընթացքում: Առանձին պարապմունքների համար ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ *բէալական դպրոցի դիրեկտորից և ուրիշ անձերից:* (№ 16) (շ) 15—100

Էջմիածնի Հայոց Սինոդի տաճարի մէջ նշանակված է ամուրդ, վարձով տալու համար ամենատեսակ հասոյթը երկրի բերքի սոյն ամի Աթոռին պատկանեալ գիւղերի, այն է՝ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ—25 *և* 27 *մայիսի սոյն ամի,* ՕՇԱԿԱՆԻ *և* ՄՕՂՆԻՈՑ—6 *և* 8 *յունիսի,* ԵՂՈՒԱՐԴԻ *և* ՄԱՍՏԱՐՈՒ—13 *և* 15 *նոյն ամսոյ,* ԲԶՆԻՈՑ—20 *և* 22 *նոյն ամսոյ:*

Անդամ կոնսիստորիայի՝ Գաբրիել քահ. Տէր-Գաբրիելեանց (№ 56) 4—4

Дозволено цензурою, Тифлисъ, 27 Мая 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.